Է.Մ. Ֆորսթեր - «Ինչին եմ ես հաւատում», «կրկնակի կեցցէ ժողովրդավարութիւնը» աշխատութիւնից (1939թ.) - Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեակ:

Ժողովրդավարութիւնն ինձ ձգում է հետեւեալի պատճառով՝ «այն ցանկալի հանրապետութիւնն է, որը սնուցւում է ազատութիւնից եւ կեանքից»: Իրականում ժողովրդավարութիւնը ցանկալի հանրապետութիւնը չէ եւ երբեք էլ չի դառնայ այդպիսին: Սակայն այն աւելի քիչ է ատելի, քան կառավարման ժամանակակից այլ ձեւերից որեւէ մէկը, եւ այդ չափով էլ այն արժանի է մեր աջակցութեանը: Նրա ելակէտն այն դիրքորոշումն է, որ անհատն է կարեւոր եւ որ ամէն տեսակի մարդ էլ անհրաժեշտ է քաղաքակրթութիւն կերտելու համար: Այն չի տարանջատում իր քաղաքացիներին կառավարողների եւ կառավարուողների, ինչպէս որ հակուած է անել արդիւնաւէտապաշտ կառավարման համակարգը: **Ես ամէնից շատ հիանում եմ զգայունակ մարդկանցով, ովքեր ցանկանում են ինչ-որ բան ստեղծել կամ յայտնագործել, եւ կեանքին չեն նայում իշխանութեան դիտանկիւնից: Այդպիսի մարդիկ ժողովրդավարութեան պայմաններում աւելի մեծ հնարաւորութիւններ են ձեռք բերում, քան կառավարման որեւէ այլ ձեւի դէպքում:** Նրանք ստեղծում են մեծ կամ փոքր կրօններ, գրականութեան եւ արուեստի գործեր, կամ անաչառ գիտական հետազօտութիւն են անում: **Նրանք նաեւ կարող են լինել այսպէս կոչուած «հասարակ մարդիկ», որոնք ստեղծարար են իրենց անձնական կեանքում, օրինակ, պատշաճ կերպով դաստիարակում են իրենց երեխաներին կամ օգնում իրենց հարեւաններին: Բոլոր այս մարդիկ ինքնաարտայայտման կարիք ունեն, սակայն նրանք չեն կարող դա անել, եթէ հասարակութիւնն իրենց գործելու ազատութիւն չտրամադրի: Եւ նրանց առաւելագոյն ազատութիւն տուող հասարակարգը ժողովրդավարութունն է:**

Ժողովրդավարութիւնը մէկ այլ արժանիք էլ ունի. այն ընդունում եւ քաջալերում է քննադատութիւնը, եւ եթէ չկայ հասարակական քննադատութիւն, ապա սխալները կը մնան կոծկուած: Ահա թէ ինչու եմ ես ապաւինում մամուլին, չնայած նրա բոլոր ստերին եւ գռեհկութեանը, եւ ահա թէ ինչու եմ վստահում խորհրդարանին: Խորհրդարանը յաճախ ծաղրի առարկայ է դառնում, որովհետեւ այն կարծես դատարկախօսերի ակումբ լինի, եւ ես հէնց այդ պատճառով էլ վստահում եմ նրան: Վստահում եմ խարհրդարանի այն անդամին, ով մշտապէս քննադատում է: Նրան նախատում են, որպէս դժգոհող եւ չտեղեկացուած մարդ, բայց նա միեւնոյն է, քննադատում է այն բաները, որոնք այլ կերպ երբեք չէին յիշատակուի: Եւ շատ յաճախ քննադատութիւնը շտկում է իրավիճակը պարզապէս յիշատակուած լինելով: Երբեմն էլ լաւ հանրային պաշտօնեան յաջողութեան պատճառով սկսում է գլուխը

կորցնել եւ իրեն Ամենակալ Աստուած համարել: Այսպիսի պաշտօնեաները յատկապէս շատ են հանդիպում ներքին գործերի նախարարութիւնում: Բայց վաղ թէ ուշ խորհրդարանում նրանց մասին հարցեր կ'առաջանան, եւ նրանք ստիպուած կը զգաստանան: Անկախ այն բանից, թէ խորհրդարանը ներկայացուցչական է, կամ որքանով ազդեցիկ եմ ես գնահատում այդ հաստատութիւնը, քանի որ այն քննադատում եւ խօսում է, եւ որովհետեւ նրա շատախօսութիւնը լայնօրէն արձագանքւում է հասարակութեան մէջ: **Ուստի կրկնակի կեցցէ ժողովրդավարութիւնը. առաջինը նրա համար, որ այն ընդունում է բազմազանութիւնը, իսկ երկրորդը՝ որովհետեւ այն թոյլատրում է քննադատութիւնը: Սակայն երկու կեցցեները լիովին բաւական են եւ երրորդի կարիքը չկայ: Միայն սիրոյ վրայ հիմնուած հանրապետութիւնն է արժանի երրորդին:**

Բայց եւ այնպէս, ի՞նչ կ'ասէիք ուժի մասին: Մինչ մենք փորձում ենք լինել զգայուն, կիրթ եւ համբերատար, տհաճ հարց է ծագում. արդեօք ամբողջ հասարակութիւնը հիմնուած չէ՞ ուժի վրայ: Ինչպէս կարող է կառավարութիւնը ճիշտ կառավարելու յոյսեր փայփայել, եթէ չկայ բանակի եւ ոստիկանութեան հանդէպ վստահութիւն: Եւ եթէ անհատի գլխին են տալիս, կամ հալածում եւ ուղարկում են աշխատանքային ճամբար, կարծիք արտայայտելն ի՞նչ օգուտ կբերի: Այս խնդիրն ինձ այնքան չի անհանգստացնում, ինչքան որոշ այլ խնդիրներ: Ես հասկանում եմ, որ ողջ հասարկութիւնն է հիմնուած ուժի վրայ: **Բայց բոլոր մեծագոյն ստեղծագործ աշխատանքները եւ բոլոր պարկեշտ մարդկային յարաբերութիւնները տեղի են ունեցել այն ժամանակահատուածում, երբ ուժը դեռ ձեւաւորուած չի եղել: Այս ժամանակահատուածներն են կարեւոր: Ես ուզում եմ, որ այդ ժամանակահատուածները լինեն հնարաւորին չափ երկար եւ յաճախակի: Եւ ես հէնց դա եմ համարում «քաղաքակրթութիւն»:** Որոշ մարդիկ ուժը հնարաւորին չափ երկար ետին պլանում պահելու փոխարէն, իդէալականցնում են այն, մղում առաջին պլան եւ երկրպագում նրան: Իմ կարծիքով նրանք սխալւում են, իսկ նրանց հակադրուողները՝ խորհրդապաշտները, աւելի մեծ սխալ են գործում, երբ հրապարակաւ ժխտում են ուժի գոյութեան փաստը: Ես գտնում եմ, որ այն գոյութիւն ունի եւ մեր առաջնային խնդիրն եմ համարում նրան իր արկղից դուրս գալուն խանգարելը: Վաղ թէ ուշ այն դուրս է գալու եւ ոչնչացնելու է ե՛ւ մեզ ե՛ւ մեր ստեղծած բոլոր հիանալի գործերը: Բայց բարեբախտաբար այդ ուժը յաւէրժական չէ, քանի որ ուժ գործադրողները, բարեբախտաբար, յիմար են:

Այսպիսով սա այն ամէնն է, ինչ ես մտածում եմ ուժի եւ բռնութեան մասին: Աւա՜ղ սա աշխարհի առաջնային իրականութիւնն է, բայց այն միշտ չէ, որ տիրապետող է: Որոշ մարդիկ ուժի բացակայութիւնն «անկում» են անուանում. ես այն անուանում եմ «քաղաքակրթութիւն» եւ այդպիսի ընդմիջումներում մարդկութեան ստեղծագործ աշխատանքն իրեն արդարացում է: Ես աչք եմ փակում, մինչեւ ճակատագրից հարուած չստանամ: Իսկ թէ իմ դէպքում սա քաջութեան, թէ վախկոտութեան արդիւնք է, պարզ չէ: Բայց ես գիտեմ, որ եթէ մարդիկ անցեալում նոյն կերպ չվարուէին, ոչ մի արժէքաւոր բան չէր մնայ: Իմ կողմից յարգուած մարդիկ իրենց պահել են անմահների նման եւ հասարակութեանն էլ մօտեցել են որպէս յաւէրժական երեւոյթի: Իրականում երկու մօտեցումներն էլ սխալ են, սակայն երկուսն էլ պէտք է համարենք ճչմարիտ, որպէսզի շարունակենք սնուել, աշխատել եւ սիրել, եւ մարդկային հոգուն շնչելու հնարաւորութիւն տանք: Թւում է, որ ոչ մի նոր դարաշրջան էլ չի ծագի մարդկութեան համար, ոչ մի աւելի լաւ եւ հզօր Ազգերի լիգայ չի ստեղծուի, ոչ մի քրիստոնէութեան նոր ձեւ եւ ոչ էլ քրիստոնէութեանն այլընտրանքային կրօն խաղաղութիւն չի բերի աշխարհին եւ մարդ արարածը չի կատարելագործուի, ոչ մի «հոգու փոփոխութիւն» չի լինի: Սակայն մենք չպէտք է յուսահատուենք եւ չենք կարող յուսահատուել. պատմութիւնը վկայում է, որ մարդիկ յամառութեամբ շարունակել են արարել նոյնիսկ սրի շողքի տակ եւ նրանք իրենց գիտական, արուեստի եւ կենցաղային գործերն անաչառութեամբ են արել, եւ մենք պէտք է հետեւենք նրանց օրինակին եւ շարունակենք արարել եւ ստեղծագործել նոյնիսկ ռմբակոծիչների շողքի տակ:

Ինձանից աւելի խիզախ ու խելօք մարդիկ տեսնում են մարդկութեան փրկութիւնն ապագայում, եւ քաղաքակրթութեան մասին իմ արտայայտած գաղափարները կը համարեն ողորմելի, անլուրջ եւ անիմաստ խաղ: Իհարկէ, անիմաստ է պնդել, որ մենք չենք կարող բարելաւուել, եւ որ մարդ արարածը, ով մի քանի հազարամեակներ շարունակ երկրում տիրակալ է եղել, երբեք չի սովորի իր այդ իշխանութիւնը ճիշտ օգտագործել: Ես նկատի ունեմ, որ եթէ մարդիկ շարունակեն սպանել իրար, ինչպէս հիմա են դա անում, աշխարհը չի կարող բարելաւուել, եւ քանի դեռ գնալով մարդութիւնը շատանում է եւ նրանց իրար ոչնչացնելու մտադրութիւնները գերակայում են, աշխարհի վիճակն ընդհակառակը՝ կարող է աւելի վատթարանալ: **Ի՞նչն է լաւը մարդկանց մէջ, եւ հետեւապէս նաեւ աշխարհում. նրանց ստեղծագործելու յամառութի՞ւնը, հաւա՞տը եւ հաւատարմութի՞ւնը անշահախնդիր ընկերութեան հանդէպ՝.** եւ թէպէտ բռնութիւնը եղել եւ իսկապէս մնում է հիմնական մասնակիցն այս խառնաշփոթ իրականութեան մէջ, ես հաւատում եմ, որ

ստեղծարարութիւնը նոյնպէս մնում է եւ միշտ պատրաստ է իշխողի դերում հանդէս գալ, երբ բռնութիւնը նահանջի:

Փրկութեան որոնումներում մենք թերեւս կարող են շրջուել դէպի հերոսապաշտութիւնը: Բայց իմ կարծիքով, սա էլ մեզ չի օգնի: **Հերոսապաշտութիւնը վտանգաւոր սովորոյթ է, եւ ժողովրդավարութեան նուազագոյն արժանիքներից մէկն այն է, որ նա չի խրախուսում դա եւ չի ստեղծում այդպիսի անսանձ անհատներ, որոնք մեզ յայտնի են այսպէս կոչուած «մեծ դէմք» անունով: Փոխարէնը՝ այն ստեղծում է հասարակ մարդկանց տարբեր տեսակներ, ինչն անհամեմատ աւելի էական ձեռքբերում է:** Բայց այն մարդիկ, ովքեր հետաքրքրուած չեն կեանքի բազմազանութեամբ եւ ովքեր չունեն սեփական կարծիք, դժգոհում են սրանից եւ սպասում են ինչ-որ առաջնորդ հերոսի, որպէսզի խոնարհուեն նրա առջեւ եւ կուրօրէն հետեւեն նրան: Սա նշանակալից փաստ է, որ առաջնորդող դէմքի առկայութիւնն այսօրուայ բռնակալների համար ամենասովորական ձեւաչափն է: Արդիւնաւէտապաշտ ռեժիմը չի կարող գործադրուել առանց մի քանի հերոսների՝ որոնք բերուել են ասպարէզ, որպէսզի հրապուրեն յիմարներին, ինչպէս սալորն են դնում անյաջող ճաշի մէջ, որ համ տա: Մի հերոսը գագաթին, եւ երկու օգնականներ նրա աջից ու ձախից՝ սա ընդունուած դասաւորուածութիւն է, եւ երկչոտն ու անտարբերը սփոփւում են եռեակի կողմից եւ, խոնարհուելով, իրենց երեւելի եւ ուժեղ են զգում:

Ո՛չ, ես չեմ վստահում մեծ դերակատարներին: Նրանք իրենց շուրջ միապաղաղութեան եւ միօրինակութեան անապատ են սարքում, իսկ յաճախ էլ նաեւ՝ արեան լիճ: Եւ ես միշտ զգում եմ հասարակ մարդկանց հաճոյքը, երբ դրանք հնձւում են եւ հաւասարեցւում են հողին: Առաջնորդն ապրում է մի այնպիսի ամբողջական ձախողում, որը ոչ մի արուեստագէտ, ոչ էլ սիրահարուած մարդ չի ապրում, որովհետեւ վերջիներիս համար արարչութեան գործընթացն ինքնին յաջողութիւն է, իսկ առաջնորդ դէմքի համար միայն արդիւնքն է յաջողութիւն:

Ես ամէն դէպքում հաւատում եմ ազնիւ մարդկանց կամ, այլ կերպ ասած, ազնուականութեանը, եթէ դա այդպէս կարելի է անուանել եւ, եթէ ժողովրդավարն իրաւունք ունի այդ բառը գործածել: Ոչ թէ ուժին ապաւինող ազնուականութիւն՝ հիմնուած աստիճանակարգութեան եւ ազդեցութեան վրայ, այլ զգայունութեան, քաղաքավարութեան եւ համարձակութեան ազնուականութիւն: Նրա անդամներն

ամէնուր են՝ բոլոր ազգերում, բոլոր դասակարգերում ու բոլոր ժամանակներում, եւ նրանց միջեւ ինչ-որ չպայմանաւորուած առեղծուածային փոխըմբռնում է գործում:
Նրանք ներկայացնում են հնուց եկած իսկական մարդկային տեսակը՝ որը մարդկութեան միակ եւ յարատեւ յաղթանակն է ընդդէմ դաժանութեան եւ քաոսի: Նրանցից հազարաւորները զոհւում են անանուն, մի քանիսը, սակայն, մեծ անուն են թողնում:
Նրանք նոյնքան նրբանկատ են ուրիշների նկատմամբ, որքան սեփական անձի նկատմամբ, նրանք ուշադիր են, բայց ոչ բծախնդիր, **նրանց համարձակութիւնը յանդգնութիւն չէ, այլ համբերատար դիմադրելու ունակութիւն,** եւ այդքան լուրջ լինելով հանդերձ, նրանք զուրկ չեն հումորից: Ես ոչ մի օրինակ չեմ բերում, քանզի դա սխալ կարող է հասկացուել, քանի որ կարդացողը կարող է խորհել, թէ արդեօք նա կը ցանկանար հանդիպել այդպիսի մարդու, կամ՝ դառնալ այդպիսին: Իսկ նրանք շանունակում են իրենց արշաւը. մի անպարտելի բանակ, որը, սակայն, դեռեւս վերջնական յաղթանակի չի հասել: Ազնիւ մարդիկ, ընտրեալներ, լաւագոյն մարդիկ՝ բոլոր այս բառերը, որով փորձում ենք նրանց նկարագրել՝ կեղծ են եւ սին, եւ նրանց կազմակերպելու բոլոր փորձերը՝ ձախողուած:
Կրկին եւ կրկին, տեսնելով եւ հասկանալով նրանց արժանիքներն ու նշանակութիւնը, իշխանութիւնը փորձեց օգտագործել նրանց՝ ուռկանով բռնելով նրանց Եգիպտական Քահանայութեանը կամ Քրիստոնէական Եկեղեցուն, Չինական Պետական Ծառայութեանը կամ Խմբային շարժման համար, կամ պատուով կամ այլ ձեւով նրանց հրապուրելով: Բայց նրանք դուրս են պրծնում ուռկանից եւ փախնում. երբ ուռկանը հանում են, նրանք արդէն չկան: Նրանց տաճարը, ինչպէս նրանցից մէկը նշեց, Սրտի սուրբ զգացումներն են, իսկ թագաւորութիւնը՝ լայն բացուած աշխարհը, որի վրայ նրանք երբեք չեն իշխի:

Քանի դեռ կան այսպիսի մարդիկ մեր մէջ, յստակ կարող ենք ասել որ մարդկութեան ստեղծման փորձը չի ձախողուել: Բայց սա կարող է համարուել նաեւ լիակատար ողբերգութիւն՝ ողբերգութիւն, քանի որ ոչ մի գործիք չի յայտնագործուել, որի օգնութեամբ այս անձնական պարկեշտութիւնը հնարաւոր լինէր փոխանցել հանրային գործերին: Հէնց որ մարդիկ իշխանութեան են հասնում, նրանք անազնիւ են դառնում եւ երբեմն էլ մի քիչ ցնդած, որովհետեւ իշխանութիւնը նրանց բարձրացնում է այնպիսի ասպարէզ, որտեղ սովորական ազնուութիւնը երբեք իրեն չի արդարացնում: Օրինակ, խորհրդարանի շէնքի մօտ թերթ վաճառողը հանգիստ կարող է թողնել իր թերթերը եւ գնալ խմիչք գնելու՝ թողնելով իր գլխարկն այնտեղ, եւ իւրաքանչիւրն, ով թերթ կը վերցնի, անպայման դրամ կգցի նրա գլխարկի մէջ: Բայց

խորհրդարանի շէնքի ներսում գտնուողները չեն կարող այդպէս միմեանց վստահել: Առաւել եւս, նրանց կողմից կազմաւորուած կառավարութիւնը չի կարող վստահել այլ կառավարութիւնների: Այստեղ փոխյարգանքը չի աշխատում, այլ միայն կասկածը, զէնքը եւ դաւաճանութիւնը: Ինչքան լաւ է կազմակերպուած լինում հանրային կեանքը, այնքան աւելի խորն է խորտակւում նրա բարոյական բնութագիրը: Այժմեան ազգերը միմեանց հանդէպ աւելի վատ են տրամադրուած, քան երբեւէ անցեալում, նրանք թալանում, արհամարհում եւ խաբէութեամբ են զբաղւում, անտեղի պատերազմներ են սկսում եւ սպանում են հնարաւորին չափ շատ կանանց եւ երեխաների, մինչդեռ նախնադարեան ցեղերը բոլոր դէպքերում կաշկանդուած էին սնապաշտական չգրուած օրէնքներով: Սա սթափեցնում է, չնայած, ինչքան մեծ է խաւարը, այնքան պայծառ են շողում փոքրիկ լոյսերը, որոնք միմեանց յորդորում եւ ազդանշան են տալիս. «չնայած շատ գոհ չեմ, բայց դեռ կամ: Իսկ դո՞ւ»: Ահա իմ ասած ազնիւ մարդկանց անշէջ լոյսերը, անյաղթելի բանակի ազդանշանները: Բացի դրանից, կարծում եմ որ միմեանց հաղորդում են նաեւ սա. «ամեն դէպքում, եկէք կեանքը վայելենք, քանի դեռ կանք եւ կարող ենք»:

Ապագայի փրկիչը, եթէ նա երբեւէ գա, չի քարոզի Նոր աւետարան: Նա պարզապէս կօգտագործի այդ ազնիւ մարդկանց, նա պիտանի կը դարձնի բարեացակամութիւնն ու լաւ բնաւորութիւնը, որոնք դեռեւս կան: Այլ կերպ ասած, նա նոր մօտեցում, նոր գործելակերպ կներմուծի: Տնտեսագիտութիւնն ասում է, որ եթէ տարաբաշխման նոր քաղաքականութիւն մշակուէր, ապա աղքատութիւն չէր լինի, եւ մարդիկ ստիպուած չէին լինի սովի մատնուել մի վայրում, մինչդեռ մի ուրիշ վայրում բերքն այնքան շատ էր, որ չէր հասցւում հաւաքուել եւ ստիպուած այն թողում էին հողի մէջ: **Նոյնպիսի փոփոխութիւն է անհրաժեշտ կատարել նաեւ բարոյականութեան եւ քաղաքականութեան ասպարէզներում:** Այդ ցանկութիւնն ամենեւին նոր չէ, օրինակ այն արտայայտուել է Ջակապոնէ դա Տոդիի աստուածաբանական մեկնաբանութիւններում, աւելի քան վեց հարիւր տարի առաջ. “Ordena questo amore, tu che m'ami”: «Ո՛վ դու, որ սիրում ես ինձ, կարգաւորիր քո սերը»: Նրա խնդրանքը չիրականացաւ, եւ ես կարծում եմ, որ այն երբեք էլ չի իրականացուի. սակայն հնարաւոր ճանապարհը սա է, եւ ոչ թէ բարոյականութեան բարելաւումը: **Ոչ թէ աւելի լաւը դառնալով, այլ իր բնական առաքինութիւնները կարգաւորելով եւ բաշխելով Մարդ արարածը կփակի Ուժն իր արկղի մէջ եւ դրանով ժամանակ կշահի, որպէսզի բացայայտի տիեզերքն ու իր տեղն ըստ արժանուոյն հաստատի նրա մէջ:** Ներկայումս նա ուսումնասիրում է միայն այնպիսի պահերի, երբ ուժը թուլանում է, եւ նրա աստուածային արարչագործութիւնը անարժէք կողմնակի հետեւանք է թւում,

որը անտեսւում է, հէնց որ լսւում է թմբկահարների ձայնը եւ ռմբակոծանիչների աղմուկն է բարձրանում:

Վերեւում ներկայացուած են անհատապաշտ եւ ազատամիտ մարդու մտքերը, ում աչքերի առջեւ լիբերալիզմը փլուզուեց, որի համար նա սկզբում ամաչեց: Յետոյ, շուրջը նայելով, նա գտաւ, որ ամաչելու ոչ մի առանձնայատուկ պատճառ չկայ, քանզի ուրիշներն ինչ էլ որ զգային եւ հասկանային, նրանք միեւնոյնն է մնում էին վտանգուած: Իսկ ինչ վերաբերում է անհատապաշտութեանը, ապա եթէ նոյնիսկ ինչ որ մէկը ցանկանայ, միեւնոյնն է դրանից ազատուելու ոչ մի ճանապարհ չի կարող գտնել:
Հերոս դիկտատորը կարող է իր քաղաքացիներին ճնշել, մինչեւ որ նրանք դառնան միակերպ, բայց նա չի կարող նրանցից ձուլել մէկ մարդ: Դա իր ուժերից վեր է: Նա կարող է հրամայել նրանց միաւորուել եւ դրդել նրանց զանգուածային խժդժութիւնների, բայց նրանք պարտաւոր են ծնուել եւ մահանալ առանձին, եւ ելնելով այս անժխտելի հանգամանքից, նրանք միշտ կը խուսափեն ամբողջատիրական ուղուց: Ծննդեան յիշողութիւններն ու մահուան սպասումներն ընդմիշտ թաքնուած են մարդկային էութեան ներսում՝ առանձնացնելով նրան միւսներից եւ օժտելով նրան այլոց հետ շփուելու ընդունակութեամբ: Մերկ եմ եկել այս աշխարհ, մերկ էլ գնալու եմ այս աշխարհից: Եւ սա ինձ մի հիանալի բան է յիշեցնում, որ բոլորս էլ նոյնն ենք՝ անկախ մեր շորերի եւ մաշկի գոյնից: